

Տ. ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հանձնարարությամբ ա/թ. ապրիլի 22-ից մինչև մայիսի 20-ը պաշտոնական-հովվական այցով Հունաստանի հայոց տիրախնամ թեմում էր գտնվում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը: Հունահայ թեմի պատմության մեջ առաջին անգամ էր, որ այս թեմ էր այցելում Հայոց Հայրապետի բարձրաստիճան պատվիրակը՝ գալով ս. Էջմիածնից և մայր հայրենիքից:

Աթենքի միջազգային օդանավակայանում Մայր Աթոռի պատվիրակ սրբազանը դիմավորվում է հունահայ թեմի ներկայացուցիչների և հոգևոր դասի կողմից:

Տ. Կոմիտաս սրբազանին այստեղ դիմավորում և բարի գալուստ է մաղթում Հունաստանում օրթոդոքս եկեղեցու հովվապետ տ. Սերաֆիմ արքեպիսկոպոսի ներկայացուցիչը:

Ապրիլի 23-ին, Ծաղկազարդի օրը, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը պատարագում և քարոզում է Պեթիստերիի հայոց ս. Աստվածածին եկեղեցում՝ ներկա հավատացյալ ժողովրդին հաղորդելով Վեհափառ Հայրապետի աղջույններն ու օրհնությունները:

Ապրիլի 27-ին, Ավագ հինգշաբթի օրը, նույն եկեղեցում սրբազան հայրը կատարում է Ոտնլվայի կարգ և նախագահում ու գլխավորում հսկման և հաջորդ օրը թաղման արարողություններին:

Ապրիլի 29-ին, շաբաթ օրը, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը հունահայ թեմի ատենապետ, փաստաբան տիար Ստեփան Ֆեսջյանի հետ Աթենքի հունաց Մայր տաճարում մասնակցում է հույն օրթոդոքս եկեղեցու ս. Զատկի ճրագալույցի արարողությանը:

Այստեղ նրան ջերմորեն ողջունում և բարի գալուստ է մաղթում, որպես Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցչի, Հունաստանի օրթոդոքս եկեղեցու պետ Ն. Ամենապատվություն Սերաֆիմ արքեպիսկոպոսը:

Ապրիլի 30-ին, կիրակի օրը, առավոտյան, սրբազանը ս. Զատիկի տոնի առթիվ, խումն բազմության ներկայությամբ, պատարագում և քարոզում է Պերիստերիի հայոց եկեղեցում:

Մայիսի 7—8 օրերին տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը այցելում է Կրետե կղզու հայ համայնք, ուր պատարագում է Հերակլեոնի հայոց եկեղեցում, որից հետո հանդիպում է ունենում տեղի փոքրաթիվ, հավատավոր և հայրենասեր հայ գաղութի անդամների հետ:

Մայիսի 13—15-ը սրբազանը լինում է Թեսաղոնիկեում, ուր վեմ քարի վրա սուրբ պատարագ է մատուցում տեղի Հայ բարեգործական ընդհանուր միության սրահում:

Մայիսի 17-ին Աթենքում սրբազանը

պաշտոնական այցելություն է տալիս Հունաստանի կրոնից նախարարության պետին: Հայոց Հայրապետի պատվիրակի և պետական բարձրաստիճան ներկայացուցչի միջև տեղի է ունենում բարեկամական զրույց:

կոչ անելով է՛լ ավելի ամրապնդել նաև մեր օրերին այն բարեկամությունը, որ դարերի ընթացքում ձեռք են բերել մեր երկու, երբեմն նահատակ ժողովուրդները: «Հայերն ու հույները եղբայրներ են. մենք պետք է միասնաբար գործենք մեր ընդհանուր թշնամու դեմ», հայտարարում է հույն եկեղեցու գահակալը՝ միաժամանակ շեշտելով այն, որ իրենց նպատակին հասնելու համար հույն կառավարությունն ու եկեղեցին, ինչպես նաև Հունաստանում ապրող հայերը աշխատում են բարելավել իրենց հարաբերությունները Հայաստանի հայության հետ և այդ անել՝ ս. Էջմիածնի միջոցով:

Մայիսի 20-ին տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, Հունաստանում ավարտելով իր հովվական այցելությունը, խանդավառ և լավատես վերադառնում է Մայր Աթոռ լավագույն տպավորություններով:

Նորին Ամենապատվություն Տ. Սերաֆիմ արքեպիսկոպոսը և տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը. Աթենք

Հաջորդ օրը, մայիսի 18-ին, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը այցելում է Հունաստանի Ամենապատիվ Սերաֆիմ Արքեպիսկոպոսին: Երկու արքեպիսկոպոսների միջև տեղի է ունենում բարեկամական ջերմ զրույց, որի ընթացքում տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը Հունաստանի եկեղեցու գահակալին է հաղորդում Ամենայն Հայոց կաթողիկոսի եղբայրական հրավերը՝ այցելելու Հայաստան, Մայր Աթոռ ս. Էջմիածին: Հայոց Հայրապետի հրավերը սիրով ընդունվում է:

Ամենապատիվ Սերաֆիմ Արքեպիսկոպոսը զրույցի ընթացքում շեշտում է հայ և հույն ժողովուրդների փառավոր անցյալը՝